

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅ

ԱՌԱՋԿՈՒՄԱՏ

ՍԱՆՏՈՒՄ
ԳՐԱԴԱՐԱՆ
№ 23

ԲԺ. Ա. ՎԱԶԻՐՅԱՆ

ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԵՖ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏՐՈՍ · ՔԺՂԱՏՐԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933

30 JAN 2018

-520-


№ 23 ՍԱՆՏՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆ № 23

616.927

Բժ. Ա. ՊԱԶԱՐՅԱՆ

ՎՈՐՈՎ ԱՅԵՒ ՏԻՖ

(ԵԿ ԱՐԿԵՐՈՒ)



ՊԵՏՎՈՒԹ

ՅԵՐԵՎԱՆ

ԲԺՇՔ ՕՏՍԲ ԱԺԿԵ

1932

1. ՎՈՐՈՎԱՅՑՆԻ ՏԻՖ

Վորովայնի ռիֆն ամենասարածված հիվանդություններից մեկն է: Յարական մոռասատանում ամեն տարի վորովայնի տիֆով հիվանդանում ելին մի քանի հազար հոգի: Նրա համաձարակն ուժեղ և լինում սովի և պատերազմի տարիներին:

Իմպերիալիստական պատերազմի տարիներին, Հատկապես 16 և 17 թվերին, տիֆը խոչըն զոհեր պատճառեց Կովկասյան Փրոնտում:

Իսկ 19 թվի յերկրորդ կիսում, Հայաստանում վայր չկար, ուր տիֆ հիվանդությունն առատ հունձ չունենար:

Միայն Յերևան քաղաքում տիֆով հիվանդների թիվը շուրջ յերեք հազար եր հաշվվում:

Խորհրդայնացումից հետո վորովայնի տիֆը զգալի կերպով պակասում է: Այնպես վոր, յեթե ցարական շրջանում վորովայնի տիֆից, յուրաքանչյուր հազար հոգուց, հիվանդանում եր 20-26 հոգի, 1928 թվից հետո այդ թիվն իշխում է մինչև 5-ի:

Վորովայնի տիֆը սուր վարակիչ հիվանդություն է: Նա ունի իր հատուկ մանրեն:

Առաջին անգամ, 1889 թ., այդ մանջելի գոյացությունը, համարյա թե միաժամանակ, Յերևան հանեցին յերկու դիտնականներ՝ Երերտը և Կոխը: Յերկուսն ել իրենց փորձերը կատարում ելին հիվանդների կղկղանքի և տիֆով մեռածների աղիքների վրա:



1-36029

Վորովայնի տիֆի մանրեն նման է մի շատ կարծ, հաստ ու կլոր ծայրերով ցուպիկի, վորր հասարակ աչքով անհնար և տեսնել: Նրան կարելի յէ տեսնել միայն խոշորացույցի տակ, այն ել, յերբ մեծացնում էնք 600-1000 անգում: Այդշափ մեծացնելուց հետո յել նա յերեռմ և փոքրիկ քուրցի գլխի չափ:

Ցուպիկի յերկու ծայրերին կան 8-12 թարթիչներ, վորոնց միջոցով նա կատարում է իր չարժումները:


Վորովայնի տիֆի մանրեն, ինչպես առհասարակ շատ մանրեներ, արագ են զարգանում: Մի որվա մեջ, բարենպաստ պայմաններում, մի մանրեն կարող է աճել և դառնալ մի քանի միլիոն:

Վորովայնի տիֆի մանրեները գտնվում են հիվանդի արտաթորություններում, մեզում, որուն մեջ, թքում, քիչ անգամ քրտինքի մեջ:

Դիավոլնության ժամանակ մեծ չափով վորովայնի տիֆի մանրեների յենք հանդիպում հաստ աղիքներում, փայտաղի և, մանավանդ, լեզու փուշտի մեջ:

Վորովայնի տիֆի մանրեները շատ գիմացկուն են և կենառնակ նաև մարդկային որդանիզմից դուրս: Նրանք չեն դիմանում միայն արևի լույսին և չորության, այն ինչ մեծ դիմացկունություն են հայտաբերում բարձր աստիճանի ցրտին:

Ցելսիի 70 աստիճան տաքության մեջ վորո-



Վորովայնի տիֆի մանրեները:
Ենթանը՝ չափազանց մեծացրուծ:

վայնի տիֆի մանրեները քառորդ ժամից հետո վո-
շընչանում են: Թույլ տաքությունը համարվում է
37 աստիճանը, մարդու մարմնի տաքությունը: 40
աստիճանից հետո նրանց աճումը նորից դանդա-
ղում է:

Վորովայնի տիֆի մանրեներն իրենց կենառ-
նակությունը 2-3 ամիս (պահպանում են չըի մեջ
և հողում, ինչպես և յուզի ու պանրի մեջ: Կաթի
մեջ համեմատաբար կարծառն կյանք ունեն: Կար-
ծառն կյանք ունեն նաև յեփած ջրի մեջ, ուր սնրն-
դաբար նյութեր քիչ կան:

Ամենից յերկար, կարելի յէ առել տարիներ,
վորովայնի տիֆի մանրեներն ապրում են կեղափ
մեջ, ջրհորներում և կանգնած ջրերի մեջ: Որգա-
նիզմի մեջ ամենից յերկար մնում են լեզու փամ-
փուշտում: Այնպես վոր հիվանդությունից առող-
ջացած մարդը, գեւես յերկար ժամանակ, իր մեջ
կրում է տիֆի մանրեներ:

Վորովայնի տիֆի բացիլները դիմացկուն են
նաև ուժեղ թույնի հանդեպ: Սուլեմայի 1,2 տո-
կոս, իոկ կարբույան թթվուտի 5 տոկոսանի խառ-
նուրդները կես ժամից հետո միայն կարողանում
են վոչնչացնել վորովայնի տիֆի մանրեները:

Աղային թթվուտը չի վոչնչացնում տիֆի ման-
րեներին, այնպես վոր, սուամոքսային հյութը
մարդուն չի պաշտպանում փարակումից:

2. Ի՞՞նչՊԵՍ Ե ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՈՒՅԻՄ

Վորովայնի տիֆի գլխավոր տարածողները
հիվանդներն են: Վարակը տեղի յէ ունենում գլու-
խավորապես հիվանդի հետ ունեցած շփումից կամ
ջրի և սննդանյութերի միջոցով:

Վորովայնի տիֆով հիվանդանում են այն ժամանակ, յերբ նրա մանրեն վորուե ձեվով ընկնում է մարդու մարսողության որդանը:

Վարակի լովազույն միջոցներից մեկը : իվանդի գործածած ամանեղեններն են, յեթև նրանք մարուր չեն պահպատմ և ախտահանվում: Ախտահանման սովորական ու լավ ձեր, դա տաք ջրի մեջ տմանեղենների յեռացնելն է:

Ամանեղենի միջոցով վարակը տարածվում է մանավանդ գյուղերում, ուր մի ամանի մեջ ուտելի «որապենական հին սովորություն» է, վորի գետ խստորեն պիտի պայքարել:

Դիտված է, վոր մեծ տներում, ուր խիտ քնակչություն կա, վարակման գեպքերը հաճախ են լինում: Նման տները կոչվում են «տիֆոս տներ», ուր կեղտի ու նեղվածության մեջ բազմանդամ ընտանիքներ են ապրում իրար վրա կուտակված:

Վարակման գլխավոր ֆակտորներից պիտի համարել ջուրը: Ջրից առաջացած վարակը միշտ էլ մասսայական ընույթ ունի, քանի վոր վարոկված ջրից միաժամանակ խոյում են շատերը:

Ջրերը վարակում են գլխավորավես մարդկային կեղաստություններից: Արտաքնացներ ունենալը մեզանում նոր է. նա մասսայական անհրաժեշտություն դեռ չի դարձած, զբա համար ել մարդկային արտաթօրությունները տեղի յեն ունենում, հատկապես ոյուղերում, բացողյա, բնակարանների շուրջը, կամ լավագույն դեպքում, մարադներում, գոմերում ու չափարների տակ: Անձերի ժամանակ այդ արտաթօրություններն այլ կեղտերի հետ քչվում թափում են գետերի,

ջրհորների ու աղբյուրների մեջ, վորտեղից վերցնում են խմելու ջուրը և վարակում:

Բայց աղտոտված ջրերից կարելի յե վարակվել նաև լվացվելով ու լողանալով, կամ թե չե, յերբ լվացը են անում կամ մեջն ամաններ լվանում:

Վարակվել կարելի յե նաև պտուղներից, կանուչեղենից ու կաթից, յերբ նրանք այս կամ այն ձեվով մանրեններ են պարունակում:

Վարակի աղբյուր կարող է ծառայել նաև հողը: Վերը մենք արդեն նշել ենք, վոր հողը վորովայնի տիֆի մանրենների համար լսվագույն միջավայրն է, ուր արագությամբ աճում են ու զարգանում ամեն տեսակի մանրեններ: Քամինների միջոցով կամ կոչիկների վարակի բացի լիները կարող են ներս թափանցել մեր ընակարանները:

Սակայն վորովայնի տիֆի ակտիվ տարածողաները ճանձեն են, վորոնք իրենց թաթերով ու թեփերով աղտոտություններն ու մանրենները փոխադրում են սննդանյութերի և նրանց ուտելով վարկում ենք:

Այստեղից հետեւություն. նաևների ու միջուռների դեմ պայքարն անհրաժեշտություն է, վորը յարեք մոռացության չպիտի մատնենք:

ՎՈՐՈՎԱՅՑՆԻ ՏԻՖԻ ԸՆԹԱՑՔԸ

Ինչպես բոլոր վարակիչ հիվանդությունները, այնպես և վորովայնի տիֆն ունի իր գաղանի դարձացման շքանը, վորի տեսողությունը 2-3 շաբաթ է:

Վորոչ պայմաններում ուժեղ որդանիդմբ չի յենթարկվում վարակի աղքեցության և առանձին հիվանդադին յերեսույթներ չի արտահայտում.

շնայտծ վոր նբա մեջ կան մանրեներ: Նման հիվանդաները պարզապես կոչվում են վորովայնի ախֆի մանրեներ կրողներ: Բայց սովորական ձևն այն է, վոր գաղտնի շրջանից հետո ականատես ենք վորոշ հիվանդադին նշանների. այն ե՝ առաջանում ե ընդհանուր թուլություն, հիվանդն ախորժակը կորցնում է, գուլիսը ցավում, վողջ մարմինը կոտրատվում է: Այդ յերեւույթներն աստիճանաբար ուժեղ զանում են. հիվանդը դողացնում է, վորից հետո բարձրանում է տաքությունը, լեզուն չորանում ե ու սպիտակում, առաջանում է ծարավի զգացում. ինքնաղդացումը գնալով վատանում է:

Հիվանդն անկողին ե մտնում:


Վորովայնի տիֆը սովորաբար 4 շաբաթ ե տեսում, համարելով սկիզբը տաքության բարձրանալը, իսկ վերջը՝ տաքության անկումը: Լինում են և թեթև տեսակներ, յերբ հիվանդությունը մեկ կամ յերկու շաբաթ ե տեսում, կամ վոտքի վրա յե անցնում: Սակայն դրանք յեզակի գեպքեր են:

Տիֆի ծանր տեսակը համարվում է այն, վոր հիվանդությունը տեսում է 3-4 շաբաթ: Առաջին շաբաթում տաքության աստիճանը բարձրանում է. 2-3-րդ շաբաթում հասնում է իր գաղաթնակետին և մնում է կանգնած, իսկ 4-րդ շաբաթում՝ սկսում է հետզհետե իջնել:

Վորովայնի տիֆի տաքությունն այնքան քնորոշ է ու ինքնատիպ, վոր փոքր ի շատե փորձված բժիշկը կարող է առանց սխալի վորոշել հիվանդությունը, անգամ առանց հիվանդին տեսնելու: Այնպես վոր, տաքության կանոնավոր ու ժամանակին չափումները մեծ կարևորություն ունեն դիագնոզի համար:

Հիվանդության ամենածանր ժամանակամիտը ջոցը 3-րդ շաբաթն է համարվում և ահա այդ ժամանակ է, վոր բժիշկը պիտի լարե իր վողջ ուշաղքությունը:

Այդ շրջանում հիվանդը կորցնում է իր գետակցությունը, զարանցել է սկսում, ուժեղ շարժումներ ե անում, մի կողքից մյուսն է շրջում, կամ ընդհակառակն, անկողնի մեջ անշարժանում ե և աչքերն ել մի կետի հառում:



№ 2 նկար—վորովայնի տիֆի տաքության ախտիկ աստիճանը

Հիվանդի մաշկը չոր ե լինում ու տաք, շըրթունքները չոր ու ճաքճքված, լեզուն սպիտակ ու ծածկված փառերով. բերնից ծանր հոտ ե զալիս: Փորը փոքր ինչ տողած ե լինում ու գագերով լի, հաճախ ծեռք տալիս ցավում է: Արտաթորությունը կրիկ ե, ծանր հոտով ու կանաչավուն, ինչպես սովորաբար ասում են՝ «սիսեռի ապուրի» յե նման:

Մկրտի շրջանում հիվանդը կարող ե նաև փորկապություն ունենալ: Առաջին շաբաթվա վերջը կամ յերկրորդի սկիզբը հիվանդի մարմնի վրա յերևում ե կարմիր ցան, շատ փոքր քորոցի գլխի նման: Մատով սեղմած ժամանակ նրանք իրենց կարմրությունը կորցնում են և տեղը թողնում սպիտակ նշան:

Յերկրորդ շաբաթվա վերջը կամ 4-րդի սկիզբը տաքությունն սկսում ե աստիճանաբար ընկնել, լեզվի չորությունն անցնում ե, հիվանդի ինքնազգացումը լավանում ե, 4-րդ շաբաթվա վերջերից հիվանդն արդեն կազդուրվել ե սկսում: Դրա ախորժակը վերականգնում ե, քունը կանոնավորվում ե, մի խոսքով հիվանդն արագությամբ ապաքինվել ե սկսում:

Սակայն հիվանդությունը միշտ ել նման բարեհսցող յելք չի ունենում. հաճախ չնչին շեղում զիետից կամ անուշադիր խնամք, մեկ ել տեսաք հիվանդը նորից ծանրացավ, նորից յերեաց տաքություն, լուծ, թուլություն: Մահացությունը սովորաբար 3-րդ շաբաթվա վերջում ե տեղի ունենում:

Տարիքով ու թույլ մարդկանց տաքության աստիճանը թեև համեմատաբար ցածր ե լինում, սակայն նրանք դժվարությամբ են հիվանդության դիմանում:

4. ՎՈՐՈՎԱՅՑՆԻ ՏԻՖԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Տիֆի գլխավոր արտահայտությունը տեղի յեւնենում աղիքներում, դրա համար ել հիվանդությունը կոչվում ե «աղիքային կամ վորովայնակին»: Մանրեները մտնելով աղիքների մեջ, նրանք

ներս են թափանցում հուղաթաղանթի և գեղձերի խորքերը առաջ բերելով բորբոքում և ուռուցքներ, վորոնք վերածվում են վերքերի: Այդ վերքերը յերբեմն կարող են մեծ տարածություն բռնել:




Հ 3 նկար.—վորովայնի տիֆով հիվանդի աղիքներում գոյացած վերքերը:

Նման դեպքերում դիետից չեղումը կարող ե ժանր հետևանքներ ունենալ. կարող ե աղիքային արյունահոսություն առաջ բերել կամ թե պարզապես ծակել աղիքը, վորի հետեւանքը հիվանդի համար լինում ե մահացու:



Հ 4 նկար—վորովայնի տիֆով հիվանդի աղիքներում հանդիսական աղիքների վերքերը:

Բայց կանոնավոր խնամք քի դեպքում այդ վերքերը, 3-րդ շաբաթվա վերջը, սովորաբար սկսում են առողջանալ: Դրա համար ել, վորովայնի տիֆի ժամանակ անհրաժեշտ ե, վոր հիվանդն անկողնում հանդիսականա, ուժեղ շարժումներ չանի և վոչ ել դժվարամարտ կերակուրներ ուտի:



№ 5 նկար—1914-17 թ. թ. վորովայնային տէփի ղեմ տարգող պատվառա-
տի ո գած եֆե՛տը գրանցաւերում

Վորովայնի տիֆի ժամանակի սովորաբար մե-
ծանում են փայծաղն ու լյարդը: Տեսական ու բարձր
տաքությունից սիրտը փոփոխությունների յեւ յեն-
թարկվում և թուլանում: Արյան անոթները, հատ-
կապես յերակները՝ բորբոքվում են: Հաճախ ուղե-
ղը կամ նրա թաղանթը տիֆի մանրեների արտա-
դրած թույնից ուռչում ու թունավորվում ե, վո-
րին հետևում են մի շարք ծանր յերեսույթներ. հի-
վանդը կորցնում ե գիտակցությունը, ցնցումներ և
ունենում, զառանցում ե և գլխի ուժեղ ցավեր ու-
նենում:

Վորովայնի տիֆի բարդություններից ամե-
նից ծանրը թոքերի բորբոքումն ե, վորին առանձ-
նապես վտանգավոր ե տարիքավոր հիվանդների
համար:

Մանր հիվանդություն պիտի համարել նույ-
յերկար, միևնույն դիրքով պառկելուց առաջացած
վերքերը, վորոնք դժվար են բուժվում և մեծ ան-
հանգստություն են պատճառում հիվանդին: Նման
վերքերն առաջ են գալիս սովորաբար վատ խնամ-
քից ու աղտոտ պահելուց:

Հաճախ վորովայնի տիֆին հետեւում են մարմ-
նի մասերի պարագիչ, հատկապես վերջավորու-
թյունների, վողնաշարի ծռություն, լինում են հո-
գեկան խանգարումներ, անգամ խելաղարություն:

Հղի կանայք վորովայնի տիֆի ժամանակ հա-
ճախ վիժում են և կամ ժամանակից առաջ ծնունդ-
ներ ունենում:

Տիֆն անցնելուց հետո հիվանդի մարմինը թե-
փոտվում է, գլխի մազերն ել ուժեղ թոփիլում:
Դրա համար ել անհրաժեշտ ե վորովայնի տիփով
հիվանդների մազերն արմատից վերցնել:

5. Հիվանդի ԽՆԱՄՔԸ

Վորովայնի տիֆով հիվանդների համար հա-
տուկ գեղեր չկան, հետեւապես մեծ նշանակություն
ունի խնամքը:

Ամենից առաջ հիվանդի սենյակը պետք է լինի
ընդարձակ, լուսաւատ ու մաքուր: Հարկավոր ե
որը մի քանի անգամ սենյակի ողը փոխել. լավ ե
տաք յեղանակներին սենյակի դուռը կամ պատու-
հանը բաց թողնել, իսկ ցուրտ ժամանակ՝ ողանց-
քը:

Հիվանդի անկողինը վոչ շատ փափուկ ե լինե-
լու և վոչ ել շատ կոշտ: Փափուկ անկողինը նպաս-
տում ե հիվանդի առանց այն ել բարձր տաքության
պահպանմանը և մեկ ել՝ կարող ե առաջացնել վեր-

քեր, յերբ հիվանդը յերկար ժամանակ միևնույն զերքում մնում է պառկած: Լավ ե հիվանդի ներքնակը լինի ձիու մաղից, ծովային խոտից կամ ծղոտից:

Պիտի խիստ հսկել հիվանդի սպիտակեղենի մուրությանը. նրանց աղտոտված դեպքում պիտի գուշել և հիվանդի մարմինն ել խնամքով մաքրել:

Սենյակը շատ տաք չպիտի լինի. լավ ե պահել Ռեռոյուրի 14-15 աստիճան տաքության մեջ: Հիվանդին պիտի ծածկել ամառային վերմակով կամ տափանով, բացի այն դեպքերից, յերբ նա դողացնում է:

Հիվանդը մեծ կարիք ունի հանդստի, մանավանդ, հիվանդության 3-րդ և 4-րդ շաբաթներին, յերբ հիվանդի յուրաքանչյուր ուժեղ շարժում սպառնում է առաջացնել բարդություն:

Տիֆով հիվանդի ամանեղենը պիտի պահել առանձին, միևնույն սենյակում: Նրանցով չպիտի ողովքները, կարող են վարակվել:

Հարկավոր է խստիվ արգելել ճանճերի մուտքը հիվանդի սենյակը, այլապես նրանք կարող են վարակը փոխադրել հարևան բնակարանները:

Բարձր տաքության ժամանակ հիվանդի գրլինին պիտի դնել սառույցի կամ սառը ջրով կոմպրեսներ: Կոմպրեսները թեթևացնում են հիվանդի պլիի ցավը, զառանցանքն ու ընկճվածությունը:

Վորքան կարելի յե հիվանդին հաճախ պիտի յեռացրած սառը ջուր տալ խմելու: Ուժեղ ծարութիքեպքում ջրի վրա կարելի յե ավելացնել լիմոնի չյութ կամ քաղցրավենիքի սիրոս: Լավ ե ջրի փոխարեն տալ սառը թեյ՝ ավելացրած նույն չյութերը:

Բարձր տաքության ժամանակ լավ ե հիվանդի ժարմինը չփել քացախազրով, սպիրտի խառնուրդով կամ ողլուկոլոնով: Ծփումները թարմացնում ու ամրապնդում են հիվանդի ներվերը:

Վորովայնի տիֆով հիվանդների համար լավ են զոլ վանսաները (ռեոմյուր 27-28 աստիճանի), սակայն վանսաները պիտի նշանակի բժիշկը:

Հիվանդի լեզուն և բերանը պիտի մաքուր պահել: Հաճախ հիվանդի լեզուն պիտի մաքրել բորնի ջրի մեջ թաթախած բամբակով և նույն խառնուրդով վողողել տալ բերանը:

Հիվանդապահ քույրը կամ ընտանիքի անդամները, խնամքի ժամանակ պիտի հազնեն խալաթ և հաճախ ձեռքերը լվանան սապոնով ու աղտահանեն սուլեմայի խառնուրդով, մանավանդ ուտելուց առաջ:

Առողջանալուց հետո լավ ե քննության յենթարկել հիվանդի կալը (կղկղանքը) ստուգելու համար արդյո՞ք չկան վարակի մանրեներ:

6. ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖՈՎ ՀԻՎԱՆԴԻ ԲՈՒԺՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՑՆ ՎԱՅՐԸ ՀԻՎԱՆԴԱՆՈՅՆ Ե

Վորովայնի տիֆը լինելով ծանր ու վտանգավոր հիվանդություն, անհասժեշտ ե հիվանդին անմիջապես հիվանդանոց փոխադրել և այնտեղ խնամել ու բժշկել: Հիվանդանոց փոխադրելով հիվանդին նախ՝ դրանով մենք մեծ չափով վարակի տարածման առաջն ենք առած լինում և յերկրորդ հիվանդին զնում ենք բժշկի անմիջական հսկողության տակ. այնպես վոր վտանդի ժամին, միշտ են հնարավորություն կա հիվանդին չուտափույթ ողնություն հասցնել:

Ստուգված իրողոթյուն ե, վոր լավ սարքա-
վորված և հմուտ ու փորձված բուժաշխատակից-
ներ ունեցող հիվանդանոցներում վորովայնի տիֆը
մահացությունների չնչին առկուն ե տալիս, մինչ-
դեռ տներում այդ %-ը անհամեմատ ավելի բարձր
ե: Յեվ դա շատ հասկանալի յե, քանի վոր հիվան-
դանոցում կան բուժման ու խնամքի բոլոր անհրա-
ժեշտ պարագաները. մի բան, վոր դժվար ե ստեղ-
ծել անդամ հարուստ ընտանիքներում:

Վորովայնի տիֆի ժամանակ մեծ կարեորու-
թյուն են ներկայացնում տաք վաննաները, սառն
ու տաք կոմպրեսները, սրտի թուլության ժամա-
նակ համալատասխան սրտկումները, բարձր տա-
քության, զառանցանքի կամ հիվանդի անդիտա-
կից գեղաքերում այս կամ այն անհրաժեշտ ու շտապ
ողնությունը. պարագաներ, վոր կարող ե տալ
միմիայն հիվանդանոցը:

Վորովայնի տիֆը, ինչպես տեսանք, տալիս ե
տարբեր-տարբեր բարդություններ՝ աղիքների ու
քիթի ծանր արյունահոսություն, թոքերի բորբո-
քում, ուղեղային ծանր յերկույթներ և այլն, վո-
րոնց ժամանակ յերբեմն անհրաժեշտ են արագ մի-
ջոցառումներ կամ թե, յերբ բարձր տաքության
ժամանակ հիմունոր հայտաբերում ե նյարդայնու-
թյուն ու գրգռվածություն, որինակ՝ դուրս ե ցատա-
կում անկողնից, նման անակնկալ դիպվածներում
անհրաժեշտորեն հարկավոր ե լինում հերթակա-
հին ոգնող ոժանդակ ձեռքեր. և ահա, այսպիսի
պարագաներում, միակ բավարարողը կարող ե նոռ-
քից հիվանդանոցը լինել:

Այլևս չենք խոսում այն մասին, վոր մաքրու-
թյունը, վորը հատկապես մեծ անհրաժեշտություն

ե վորովայնի տիֆով հիվանդի համար, նույնպես
պատշաճ բարձրության վրա կարող ե դրված լինել
նորից հիվանդանոցում:

Հասարակական ապահովության տեսակետից
զարձյալ լավագույնը հիվանդանոցն ե, մանա-
վանդ, յերբ հիվանդությունը տեղի ունի հանրա-
կացարաններում, հյուրանոցներում, մութ ու խո-
նավ նկուղներում, ուր սովորաբար բնակություն-
ները խիտ են: Ամենախիստ հսկողություն պիտի
նշանակել այնպիսի հիմնարկներում, վորոնք ներ-
կոյացնում են հաստրակական սննդի կենտրոններ.
ինչպիսիք են՝ կաթնատնտեսական ու սննդամթները
ների արտելները:

Ինչ տեսակետից ել մոտենալու լինենք, կտես-
նենք, վոր հիվանդանոցային բժշկությունն ու
խնամքը, վորովայնի տիֆով հիվանդների համար,
անհամեմատ ավելի ձեռնտու և ոգտակար ե, քան
թե տներում բուժվելը: Այնպես վոր, այն վայրե-
րում, ուր հիվանդանոցներ կան, վորովայնի տի-
ֆով հիվանդներին առանց ուշացնելու պիտի փո-
խացրել հիվանդանոց:

Վորովայնի տիֆով հիվանդի հիվանդանոցա-
յին բուժումը, Սկանդինավյան յ' րկը՝ երում, յերկու
տասնյակ տարուց ավելի յե, ինչ որենքով դարձված
ե պարտագիր:

7. Հիվանդի ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Վոչ մի հիվանդ այնքան կարիք չունի կանո-
նությոր ու զգուշ կերպարման, վորքան վորովայնի
տիֆով հիվանդները: Հիվանդության ընթացքն ու
հաջող վախճանը պահպաժորապես կախված ե կերա-
կրման յեղանակից:

Վորովայնի տիֆով հիվանդի աղիքներն, ինչ-
պես գիտենք, լինում են բորբռքված ու վերքերով
ծածկված, հետեապես նրանց պիտի տալ ջրալի,
թեթև ու դյուրամարս կերակուրներ. լավ է տալ
շնչած կաթ. վորքան շատ, այնքան լավ, քանի վոր
կաթը բացի սննդարար իննելուց ու ծարավ հաղեց-
նող, նաև միզաբեր ե: Առատ մեղի հետ միաժա-
մանակ որդանիզմից դուրս են փանվում վարսկի
մանրեները: Կարելի յետ տալ բուլյոն, զանազան ջրտ
զի սուակեր՝ պատրաստված բրնձի, դարու և փարսակի
մաննաներից, սակայն լավ հարած: Շատ հիվանդ-
ներ չեն սիրում մաքուր կաթ, այդ գեպքում կաթը
պիտի տալ թեյի կամ կոֆեյի հետ: Ողտակար են՝
թարմ սերուցք, անխառն կամ թեյով, զանազան
տեսակի կիսելներ: Լուծի ժամանակ լավ է չերնի-
զայի կիսելը, իսկ փորակապության գեպքում
թթվաշ շլորը: Վերջին պարագային լավ են նույնպես
շնչած կամ խորոված խնձորը, սակայն կուտերը
հանած:

Փորի ցալի կամ ծակոցների ժամանակ առանձ-
նապես պիտի զդուշ լինել կերակուրների հետ: Բո-
լոր այն կերակուրները, վորոնք կարող են գրգռել
աղիքները, պիտի խստիվ արգելվեն: Վոչ մի դեպ-
քում վորովայնի տիֆով հիվանդին չի կարելի տալ
հաց, տապակած միս, բորշ և այլ սման դժվարա-
մարս կերակուրներ, վորքան ել հիվանդը փափագի
ու «սիրտն ել ուզենա»:

Հին ժամանակ վորովայնի տիֆով հիվանդնե-
րին պահում ելին կիսաքաղց դրության մեջ:
այդ մեթոդը ներկայումս դատապարտված ե ան-
գործության. բժիշկները թեև ուժեղ սնման կողմ-
ակից են, սակայն կերակրումը պիտի լինի ժա-

փավոր ու հաճախակի. միանգամից կուշտ ուտելը
վնասակար է, կարող ե պատճառ դառնալ հիվանդի
կյանքի վտանգման:

Վորովայնի տիֆով յերկարատե ու մաշող հի-
վանդություն ե, դրա համար ել անհրաժեշտ է հի-
վանդի սնման վրա հատուկ ուշադրություն դարձ-
նել, մանավանդ հիվանդության վերջին շրջանում,
յերբ հիվանդը սկսում է ապաքինվել:

Կերակրի փոփոխություններն ու նոր նշանա-
կումները պիտի կատարվեն բժշկի գիտությամբ ու
քույլատվությամբ:

8. ՊԱՏՎԱՍՏԸ ՎՈՐՊԵՍ ԿԱՆԽԻՉ ՄԻԶՈՅ

Հակավորովայնային տիֆի դեմ տարվող պատ-
վաստը գիտության լավագույն նվաճումներից
մեկը պիտի համարել: Նա ևս հիմնված ե նույն
սկզբունքի վրա, ինչի վրա հիմնված են ծաղկի
պատվաստը և հակադիֆտերիտի շիճուկի սրբու-
կումը: Ով մեկ անգամ տարել ե ծաղկի, քութեչի
կամ վորովայնային տիֆի հիվանդությունը, նա-
յերկորդ անգամ նույն հիվանդությամբ հաղվա-
գյուտ գեպքումն ե բռնվում, այն ել յերբ յերկար
ժամանակամիջոց ե անցնում: Նշանակում ե նրա
որգանիզմը ձեռք ե բերում իմունիտետ այդ
հիվանդությունների հանդեպ: Ասել ե՝ հիվանդա-
ցողի արյան մեջ առաջանում ե հակաքույն այդ
հիվանդությունների վարակի և նրանցից գոյացած
թունավոր նյութերի դեմ:

Այս յերեսույթը բժիշկները հիմք են ընդունում
պաշտպանելու մարդուն վորովայնի տիֆից: Մար-
դու մաշկի տակ կամ ուղղակի արյան մեջ ներար-
կում են վորովայնի տիֆի սպանած մանրեների
կամ նրանց մարմնի մեջ պարունակող նյութը: Այդ

Հեռվ որդանիզմի մեջ առաջ և գալիս հակաթույն, վորը և մարդուն պաշտպանում և տիֆի վարակման վտանգից:

Նման պատվաստը վորեն լուրջ հիվանդագին յերեսույթի չի առաջացնում մարդու որդանիզմի մեջ, բացի թեթև ցավից, վոր պատճառում և ասեղը, մեկ ել առաջին պատվաստից հետո մարդն ունենում է չնչին տաքություն:

Պատվաստումները լուր և կատարել նախքան համաճարակները. պիտի պատվաստվեն անխտիք ամենքը՝ և՛ հասակավորները և՛ յերեխաները:

Պատվաստը մարդուն պաշտպանում և վորովայնի տիֆից 6-9 ամիս, վորից հետո, հարկավոր գեղքում, պատվաստը նորից պիտի կրկնել:

Պատվաստի հետեանքները միանդամայն փայլուն են: Բազմաթիվ վորենք ապացուցել են, վոր այն խոչոր մահացությունները, վորոնք տեղի ունեցին նախքան հակավորովայնային շիճուկի գյուղը, վերացել են նրա գործադրությունից հետո:


1911 թվին, 2000 հոգուց բաղկացած Փրանսիական մի զորամասում, համաճարակի ժամանակ, պատվաստվում են 1300 զինվոր, վորոնցից և վոչ մեկը չի հիվանդանում վորովայնի տիֆով, այնինչ 700 խուսափողներից 125 զինվոր վարակվում են և 25 հոգի զոհ են տալիս համաճարակին:

Սակայն պատվաստի անհրաժեշտության լավույն ապացույցը տվել է իմպերիալիստական պատերազմը: Վորովայնի տիֆի դեմ տարրվող պարտիր պատվաստը, կովող զորամասերում, մեծապես նվազեցրել է վորովայնի տիֆի դեպքերը որքերի մեջ (տես նկար 5):

Փրանսիայում, նախքան պատվաստի գյուղը,

1895-1913 թվերին, այն եւ շուրջ 17 տարվա ընթացքում՝ վորովայնի տիֆից մեռել են 161.000 հոգի: ասել եւ տարեկան զոհ են զնացել 9000 հոգի:

Իերված թվերը փայլուն կերպով ապացուցում են հակավորովայնին տիֆի դեմ տարրվող պատ-



գաստի անհրաժեշտությունը, վորպես կանխիչ միջոցներից հղորագույնը: Հետեամբես աշխատելու յենք մեղանում ևս պատվաստի գաղափարը աշխատավորության լայն մասսաների սեփականությունը գարձնել, անդամ պարտադիր, յերբ համաճարակը սպառնում է աշխատավորությանը:

Զ. ԽՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖԻՑ

Վորովայնի տիֆից պաշտպանվելու համար կան անհատական, հասարակական և պետական նախադպուչական միջոցառումներ:

Անհատական նախազգուշության ժումանակ
ժարդիկ աշխատում են պաշտպանվել իրենց մեր-
ձավորների տիֆի վարակից: Յեվ գլխավոր ինք-
նապաշտպանության միջոցն այն ե, վոր նրանք
համաճարակների միջոցին գործ չեն ածում հում
ջուր և վոչ ել լվացվում են այն ակունքներում, վո-
րոնք կասկածվում են, թե կարող են վարակված
մենք: Վարակված ջրերում արգելվում ե՝ լողա-
նալը, լվացքը, ամանեղենի լվանալը:

Պիտի մի անգամ ըստիշտ իսանալ, վոր վո-
րվայնի տիֆի, ինչպես և խոլերային ու արյունա-
լից լուծի համանարակների տարածման զլխավոր
աղբյուրը զուրն ե: Դրա համար ել այդ հիվանդու-
թյունները կոչվում են ջրային հիվանդություններ:

Վորովայնի տիֆի համաճարակի ժամանակ
պիտի զգուշանալ նաև հում կաթից, անեփ կանա-
չեղենից և պտուղներից:

Այնուհետև զգուշանալու յեն նրանք, ովքեր
անուղղակի կերպով շիման մեջ են վորովայնի
տիֆով հիվանդների հետ:

Բոլոր քույրերը, հիվանդանոցային ծառայող-
ները և ընտանիքների հիվանդապահ անդամները,
իրենց հերթապահությունից հետո, պիտի փոխեն
իրենց հագուստները, լվացվեն, ախտահանվեն ա-
պա նոր հեռանան հիվանդի մոտից:

Սուր վարակիչ հիվանդությունների ժամա-
նակ պիտի խստիվ արգելել հիվանդատեսությունը.
Պա և հիվանդների համար ե վատ, անհանդուս-
ցնում են, և այցելուները կարող են վարակի տա-
րածման պատճառ դառնալ:

Այն աներում, ուր վորովայնի տիֆով հիվանդ-
ներ կան, պիտի խնամքով պահպեն սննդամթերք-

ներն ու ամանեղենը փակ պահարաններում, վոր-
պեսզի ճանձեր չնստեն: Պիտի բոլոր հնարավոր
միջոցներով պայքարել ճանձերի դեմ և վոչչաց-
նել:

Հիվանդի ամանեղենը, ամեն գործածելուց
հետո, պիտի ջրի մեջ յեփել, իսկ ճերմակեղենը
լվանալուց առաջ, նախորդ գիշերը պիտի պահել
արկալիների մեջ և յեփել:

Հիվանդների արտաթորությունները՝ կղկը-
ղանքը, մեղքը, թուքը և այլն, բոլորն ել ինամքով
պիտի հավաքել առանձին ամաների մեջ, ախտա-
հանվեն ու նոր թափվեն արագաքնոցների կոմ հա-
տուկ փոսերի մեջ և վրաներն ել անեփ կիր շագ
ատ, իսկ միզամանները լվանալ կարբորյան թրթ-
վուտի կամ լիզուի խառնուրդով:

Վորպես անհատական նախազգուշական մի-
ջոցներ պիտի ամենքի կողմից ել պահպանվեն՝

ա) Ամեն անդամ ուտելուց առաջ սապոնով լվա-
նալ ձեռքերը:

բ) Պիտի վոչչացնել ճանձերը և սննդամթերքն
ու ամանեղենը նրանցից խնամքով պահել փուկ պա-
հարաններում:

գ) Պատուղներն ու կանաչեղենը, ուտելուց ա-
ռաջ, բայլ լվանալ յեռացրած ջրով:

դ) Հում ջուր չխմել. խմելու դեպքում կամ
ֆերորի միջոցով անցկացնել կամ թե խմել բշկա-
կան քննությունից հետո միայն, կամ թե, յերբ
տղբյուրի ջուր ե և վարակի վտանգ չկա:

է) Կաթը գործածելուց առաջ յեռացնել:

Յեվ վերջապես անհատական նախազգուշա-
կան միջոց պիտի համարել նաև վորովայնի տիֆի
դեմ պատվաստվելը: Պատվաստն ապահովում է

Հիվանդության դեմ 6-9 ամիս։ Համաձարակների ժամանակ պատվաստը լավագույն ինքնապաշտպանության միջոցներից մեկն է։

Պետական և հասարակական միջոցառություններն ամենից ազդուն և արմատականը պիտի համարել առհասարակ բոլոր վարակիչ հիվանդությունների դեմ վարած պայքարների մեջ։

Կոլեկտիվ միջոցառություն և, ապահովել աշխատավորության ջրամատակարարման գործը քանի վար դիտենք, վոր վորովայնի տիֆի համաձարակի գլխավոր աղբյուրը վարակված ջուրն և և այդ վարակն ել համախի կապված և աղտոտված հողիներ։ Հետեւապես հասարակական ու պետական որդանները մտածելու յեն առաջին հերթին ապահովել մեր քաղաքների ու գյուղերի ջրամատակարարումը կանոնավոր ու ապահով հիմքերի վրա գնելով այն։

Գլխավոր միջոցառություն են՝

ա) Պիտի ապահովել աղգաքնակչության ժաքուր ու առողջ խմելու ջրով։ Դրա համար պիտի կառուցվեն ջրմուղներ, իսկ յեթե դա վորոշ վայրերում գեռես անհնար ե, պիտի հոգ տարվեն կանոնավոր ու առողջապահական պահանջներին համապատասխան ջրհողներ ունենալ։

բ) Արտաքնոցներ ունենալը պարտադիր պիտի դարձնել մեր գյուղերում ու քաղաքներում։ Յուրաքանչյուր տուն պիտի ունենա իր առանձին արտաքնոցը։

գ) Խստիվ պիտի հոկել բնակարանների և արտաքնոցների մաքրության։ Ամեն տուն պիտի ունենա իր հատուկ աղբի արկղը, վորոնց ձեւը պիտի տա սանիտարական բժիշկը։ Այդ արկղները պիտի

փակ պահել և հաճախ դատարկել, վորովայնի հանձերը չբազմանան ու տարածեն վարակը։

դ) Հիվանդներին անհրաժեշտ և անմիջապես մեկուսացնել հիվանդանոցներում կամ տներում, յեթե վերջիններում կան հարմարություններ։

ե) Համաձարակների ժամանակ, վորովայնի տիֆի պատվաստը, պիտի պարտադիր դարձնել ամենքի համար ել։



Հ. 7. Նկար. Վորովայնի տիֆի պատվաստը

իմպերիալիստական պատերազմի ժամանակ հակավորովայնային տիֆի պատվաստը պարտադիր եր անգլիական, գերմանական և ցարական զորքերի համար։ Դրա համար ել հիվանդությունների ու մահացությունների թիվը մի քանի անգամ պակասեց։

1923 թվին կատարված փորձերը մեզանում շուրջ տվին, վոր չպատվաստված 1000 հոգուց վո-

բովայնի տիֆոսի հիվանդանում են միջին թվով 12
հոգի, իսկ պատվաստվածներից՝ միայն 2 հոգի:
Զպատվաստված 1000 հիվանդից մեռնում էն 10-ը,
իսկ պատվաստվածներից և վոչ մեկը:

զ) Ամենից կարեորն ու անհրաժեշտը, դա սան-
հիղինիկ գիտելիքների տարածումն եւ աշխատավոր
լայն մասսաների մեջ:

Յուրաքանչյուր բանվոր պիտի ըմբռնի ու զի-
տակցի անհատական, հասարակական ու պետական
միջոցառումների ճշգրիտ ու ժամանակին գործա-
դրության անհրաժեշտությունը: Իսկ զրա համար
հիղինիկ գիտելիքների ուսուցումը պարտադիր
պիտի դարձնել բոլոր միալի դպրոցներում ան-
խութիր:



20

ՀՀ Ազգային գրադարան



NL0946955

1939г. - 474
916С 25 4-

1

3602 91

Д-р А. П. Газарян

Брюшной тиф

Госиздат ССРА—Сектор медицины

Эреван—1933

